

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐՄԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, որն ապահովում է բնապահպանության ոլորտում միջազգային համագործակցության իրականացումը և համակարգումը, բնապահպանության ոլորտում միջազգային դոնոր կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ համատեղ (ֆինանսական օժանդակությամբ) իրականացվող ծրագրերի գծով առաջարկների մշակման և հաստատված ծրագրերի իրականացման աշխատանքների կազմակերպումն ու համակարգումը:
2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կանոնադրությամբ և սույն կանոնադրությամբ:
3. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը՝ (այսուհետ՝ Նախարար) Աշխատակազմի ղեկավարի ներկայացմամբ:
4. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒ ԹՅԱՆ ԿԱՌՈՒ ՑՎԱԾԸ

5. Վարչության կառուցվածքի մեջ մտնում են՝
 - 1) արտաքին կապերի բաժինը,
 - 2) միջազգային ծրագրերի կառավարման ու մոնիթորինգի բաժինը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության խնդիրներն են՝

- 1) մասնակցություն բնապահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային քաղաքականության ուղղությունների մշակման իրականացմանը,
- 2) բնապահպանության ոլորտի միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի /այդ թվում՝ բազմակողմ/ շրջանակներում համագործակցության ապահովում,
- 3) օրենքով սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում, բնապահպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի հետ կապված աշխատանքների իրականացում,
- 4) բնապահպանության ոլորտի միջազգային գործընթացներին Նախարարության մասնակցության ապահովում,
- 5) օրենքով սահմանված կարգով միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքներին մասնակցությունը,
- 6) բնապահպանության ոլորտում միջազգային ծրագրերի նախագծերի մշակման ու նախարարություն ներկայացված միջազգային ծրագրերի նախագծերի ուսումնասիրման և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրման ապահովումը.
- 7) իր լիազորությունների շրջանակներում բնապահպանության ոլորտում Եվրամիության հետ համագործակցության ապահովումը,
- 8) օտարերկրյա պետությունների, գլոբալ և տարածաշրջանային կազմակերպությունների հետ բնապահպանության ոլորտում համագործակցության ապահովում,
- 9) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ իրականացվող ծրագրերի համակարգման ապահովում,
- 10) սահմանված կարգով արտասահմանյան գործուղումների կազմակերպման և ապահովման հետ կապված աշխատանքների իրականացում,
- 11) նախարարության սոցիալ - տնտեսական զարգացման ծրագրերում ընդգրկելու նպատակով բնապահպանության ոլորտի արտաքին քաղաքականության ուղղությունների հետ կապված դրույթների մշակման ապահովում,
- 12) ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ սահմանված կարգով համագործակցության ապահովում,
- 13) նախարարությունում իրականացվող միջազգային նամակագրության համակարգում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր խնդիրների իրականացման համար՝

1) Արտաքին կապերի բաժնի գործառույթներն են՝

ա. իր լիազորությունների սահմաններում ապահովում է Նախարարության մասնակցությունը բնապահպանական բազմակողմանի միջազգային համաձայնագրերի շրջանակներում իրականացվող միջոցառումներին /նախաձեռնություններին,

բ. իր լիազորությունների սահմաններում մասնակցում է բնապահպանական բազմակողմանի միջազգային համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարմանը,

գ. կազմակերպում է բնապահպանական բազմակողմ միջազգային համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման աշխատանքային ծրագրերի մշակման գործընթացը,

դ. համակարգում է և իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է բազմակողմանի և երկկողմանի միջազգային պայմանագրերի ու համաձայնագրերի նախագծերի մշակումը, ապահովում է դրանց ստորագրման և վավերացման հետ կապված գործընթացը,

ե. իր լիազորությունների սահմաններում մասնակցում է բնապահպանության ոլորտի երկկողմ միջազգային պայմանագրերի իրականացման աշխատանքներին,

զ. միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ Նախարարության ստորաբաժանումներից ստացված անհրաժեշտ տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա կազմում է ամփոփագրեր, իր լիազորությունների շրջանակներում ապահովում է սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացումը Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և այլ պետական մարմիններ,

է. բնապահպանական միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

ը. բաժնի լիազորությունների շրջանակներում իրականացնում է Նախարարության համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ,

թ. բաժնի լիազորությունների շրջանակներում ապահովում է բնապահպանության ոլորտի միջազգային /գլոբալ և տարածաշրջանային/ գործընթացներին Նախարարության մասնակցությունը,

ժ. իրականացնում է բնապահպանության ոլորտի միջազգային համաձայնագրերի, կառույցների, գործընթացների վերաբերյալ տվյալների բանկի ստեղծման և վարման աշխատանքները, ինչպես նաև, ըստ պահանջի, համապատասխան տեղեկատվության տրամադրումը,

ժա. սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է Նախարարությունում օտարերկրյա պետությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների պատվիրակությունների ընդունելությունը, և համապատասխան տեղեկատվության ներակայացումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

ժբ. բաժնի լիազորությունների շրջանակներում ներկայացնում է նախարարության շահերը միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների հետ հարաբերություններում,

ժգ. ըստ պահանջի ներկայացնում է Նախարարությունը Հայաստանի Հանրապետության նախարարությունների կողմից իրականացվող միջազգային բնույթի գործընթացներին,

ժդ. բաժնի լիազորությունների շրջանակներում մասնակցում է խորհրդակցությունների, գիտաժողովների, սեմինարների, վերապատրաստման դասըթացների և այլ միջոցառումների կազմակերպման և իրականացման աշխատանքներին,

ժե. սահմանված կարգով իրականացնում է արտասահմանյան գործուղումների ձևակերպումը ու դրանց վերաբերյալ տեղեկատվության ներկայացումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

ժզ. իրականացնում է արտասահմանյան գործուղումների հետ կապված նամակագրություն միջազգային կառույցների, դիվանագիտական ներկայացուցչությունների, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ: Նախարարի, Նախարարի տեղակալների գործուղումների հետ կապված նախապատրաստում է անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթ և սահմանված կարգով ներկայացնում այն Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

ժէ. ապահովում է արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրումը և դրանց ներկայացումը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,

ժը. սահմանված կարգով իրականացնում է արտասահմանյան գործուղումների վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունը և դրանց քննարկումների կազմակերպումը,

ժթ. իրականացնում է Նախարարությունում միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծությունը, նախապատրաստում է դրանց կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ,

ի. բաժնի լիազորությունների շրջանակներում կարծիք է նախապատրաստում համաձայնեցման ներկայացված իրավական ակտերի, ռազմավարական և այլ բնույթի փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ,

իա. բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում և նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրում,

իբ. բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով իրավական ակտերի նախագծերի մշակում,

իգ. նախապատրաստում և ըստ պահանջի, ներկայացնում է բաժնի գործառույթների մասով տեղեկատվական բնույթի փաստաթղթեր,

իդ. Հայաստանի Հանրապետության կառավարության և Նախարարության աշխատանքային և այլ ծրագրերում ընդգրկելու նպատակով բաժնի լիազորությունների

շրջանակներում մշակում է առաջարկություններ, մասնակցում է բյուջետային գործընթացի ձևավորմանը,

իե. իրականացնում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակումը և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

2) Միջազգային ծրագրերի կառավարման ու մոնիթորինգի բաժնի գործառույթներն են՝

ա. իր իրավասության սահմաններում օտարերկրյա պետությունների և միջազգային դոնոր կազմակերպությունների ֆինանսական օժանդակությամբ իրականացվող բնապահպանական ծրագրերի (այսուհետ՝ միջազգային ծրագրեր) համակարգումը,

բ. միջազգային ծրագրերի նախապատրաստման, բանակցային և իրականացման գործընթացներին իր իրավասությունների սահմաններում մասնակցությունը,

գ. միջազգային բնապահպանական ծրագրերի մասով նախարարության աշխատակազմի ստորաբաժանումներից, ենթակա կազմակերպություններից, ծրագրերի ղեկավարներից և համակարգողներից ստացված ծրագրերին վերաբերող տեղեկատվության, ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների (ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների) կազմումը (նախապատրաստումը) և տրամադրման ապահովումը,

դ. բնապահպանական հիմնախնդիրների լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության և Նախարարության կողմից հաստատված ծրագրերի շրջանակներում իր իրավասության սահմաններում գլոբալ և տարածաշրջանային միջազգային ֆինանսական կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցության, միջազգային ֆինանսական աղբյուրների հայթայթման և համապատասխան ծրագրային հայտերի կազմման հետ կապված աշխատանքների իր իրավասության սահմաններում համակարգումը,

ե. բնապահպանական խնդիրների ֆինանսավորմանը վերաբերող, միջազգային՝ բազմակողմանի և երկկողմանի պայմանագրերի ու համաձայնագրերի, նախագծերի մշակմանը, դրանց ստորագրման և վավերացման հետ կապված գործընթացներին իր իրավասության սահմաններում մասնակցությունը,

զ. բնապահպանական միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակում,

է. իրականացվող և նախատեսվող միջազգային ծրագրերի /ազգային և տարածաշրջանային/ վերաբերյալ տվյալների բանկի ստեղծման և վարման աշխատանքների իր իրավասության սահմաններում կազմակերպումը և իրականացումը,

ը. իր իրավասության սահմաններում Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) միջև կնքված «Գործընկերության և համագործակցության մասին» համաձայնագրի, Արևելյան Գործընկերության նախաձեռնության և Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում «Հայաստան-Եվրոպական միություն» գործողությունների ծրագրի բնապահպանության ոլորտի (ծրագրերի) գծով միջոցառումների (գործողությունների) իրականացման, և այդ միջոցառումների (գործողությունների) մասով պատկան կառույցների հետ տարվող աշխատանքների համակարգումը,

թ. Թվինինգ, Թայեքս և այլ գործիքների ներքո ծրագրային առաջարկների ու հայտերի մշակման գործում նախարարության աշխատակազմի ստորաբաժանումներին օժանդակումը և սահմանված որակի չափանիշներին՝ դրանց գծով ներկայացված փաստաթղթերի, համապատասխանության ստուգումը, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացումը,

ժ. սերտորեն համագործակցելով նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների հետ՝ Եվրոպական հանձնաժողովին Թվինինգ, Թայեքս և այլ գործիքների ներքո իրականացվող ծրագրերի դիտանցման գործում ՀՀ էկոնոմիկայի նախարարությանն օժանդակելը,

ժա. Թվինինգ, Թայեքս և այլ գործիքների ներքո նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների և Եվրոպական միության ու ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան փորձագետների հետ խորհրդակցությունների, աշխատաժողովների, ինչպես նաև ճանաչողական այցերի կազմակերպման աշխատանքների համակարգումը,

ժբ. նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումներին և այլ շահագրգիռ անձանց Թվինինգ, Թայեքս և այլ գործիքների ներքո կազմակերպվող միջոցառումների մասին տեղեկացումը և այդ միջոցառումներին վերջիններիս մասնակցությանն աջակցումը,

ժգ. իր իրավասության սահմաններում նախարարություն ներկայացված միջազգային ծրագրերի նախագծերի ուսումնասիրումը և դրանց վերաբերյալ կարծիքի տրամադրումը,

ժդ. իրավասության սահմաններում միջազգային ծրագրերի իրականացման համար արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի կառավարման, գնահատման և վերահսկողության գործընթացներին մասնակցությունը,

ժե. բաժնի իրավասությունների սահմաններում մասնակցություն օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի լրամշակմանը, բնապահպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ապահովման գործընթացներին,

ժզ. իր իրավասության սահմաններում միջազգային ծրագրերի նախապատրաստման և իրականացման գործընթացներին ըստ անհրաժեշտության տեղական և արտասահմանյան փորձագետների ներգրավման կազմակերպումը,

ժէ. կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջազգային ծրագրերի կատարման ընթացքի մոնիտորինգը և արդյունքների գնահատումը,

ժը. նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ բնապահպանական ծրագրերի, նախագծերի գնահատումը,

ժթ. ԵՄ ֆոնդերից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման համար մեթոդոլոգիաների, ձեռնարկների և փաստաթղթերի կազմման աշխատանքների ուղղությամբ իր իրավասության սահմաններում համագործակցությունը նախարարության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ,

ի. ըստ պահանջի ներկայացնում է Նախարարությունը Հայաստանի Հանրապետության նախարարությունների կողմից իրականացվող միջազգային բնույթի գործընթացներին,

իա. բաժնի լիազորությունների շրջանակներում իրականացնում է Նախարարության համագործակցությունը գլոբալ և տարածաշրջանային միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ,

իբ. բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում և նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրում,
իգ. բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով իրավական ակտերի նախագծերի մշակում:

Վ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ,
ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

8. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
9. Վարչության գործունեությունը համակարգում և վերահսկում է Աշխատակազմի ղեկավարը:
10. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Վարչության պետը:
11. Վարչության աշխատողներն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև իրենց պաշտոնների անձնագրերով նախատեսված լիազորությունները և ապահովում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականների կատարումը: